Սյունիքի մարզի Կապանի թիվ 13 հիմնական դպրոց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսուցման կազմակերպման ձևերը

Դասվար՝ Աստղիկ Դանիելյան

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

ԵՐԵՎԱՆ-2022

Բովանդակություն

Ներածություն. 3

Գլուխ 1. Ուսուցում, կազմակերպման ձևերը. 4

Գլուխ 2. Խմբային ուսուցում. 8

Գլուխ 3. Հեռավար ուսուցում. 13

Եզրակացություն. 19

Գրականություն. 20

Հավելված. 21

Ներա[illegible]ւն

Աշխատանքը կատարելիս հնարավորինս ներկայացրել ենք ուսուցումը, մանրամասն անդրադարձել ենք նրա կազմակերպման ձևերին: Ներկայացրել ենք խմբային ուսուցման առանձնահատկությունները, կարևորությունը և կիրառումը ուսուցման մեջ: Ինչպես նաև անդրադարձել ենք հեռավար ուսուցմանը, ներկայացրել ենք նրա կարևորությունը և հասանելիությունը ժամանակակից

ուսուցման մեջ: Օգտվել ենք հայերեն և նաև օտարալեզու գրականություններից, համացանցային աղբյուրներից:

Ուսուցումը համակարգված կրթություն ստանալու ամենակարևոր և վստահելի միջոցն է: Լինելով երեխայի գիտակցության մեջ առկա իրականության արտացոլման հատուկ կազմակերպվող բարդ և բազմակի գործընթաց, ուսուցումը ոչ այլ ինչ է, քան մանկավարժի կողմից ղեկավարվող ճանաչման առանձնահատուկ գործընթաց: Այդ իսկ պատճառով աշխատանքիս մեջ փորձել ենք հնարավորինս առաջնահերթություն տալ առավել կարևոր և նպատակահարմար ուսուցման ձևերին, շեշտը դնելով առաջին հերթին խմբային և հեռավար ուսուցման կարևորության վրա:

Աշխատանքը բաղկացած է 3 գլուխներից, որոնցում ներկայացվում են ուսուցման կազմակերպման ձևերը, դրանց զարգացման պատմությունը, հեղինակավոր մանկավարժ հետազոտողների դիտարկումները և ժամանակակից մարտահրավերները:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ուսուցումը որպես մանկավարժական գործընթացի կազմակերպման եղանակ

Ուսուցումը համակարգված կրթություն ստանալու ամենակարևոր և վստահելի միջոցն է: Արտահայտելով մանկավարժական գործընթացի ամենաէական հատկանիշները (երկկողմանիությունը, ուղղվածությունը դեպի անձի ներդաշնակ զարգացումը, բովանդակային և պրոցեսուալ կողմերի ամբողջությունը), ուսուցումը միևնույն ժամանակ ունի առանձնհատուկ որակական տարբերություններ: Լինելով երեխայի գիտակցության մեջ առկա իրականության արտացոլման հատուկ կազմակերպվող բարդ և բազմակի գործընթաց, ուսուցումը ոչ այլ ինչ է, քան մանկավարժի կողմից ղեկավարվող ճանաչման առանձնահատուկ գործընթաց: Հենց ուսուցչի ուղղորդիչ դերն է ապահովում դպրոցականների կողմից գիտելիքների, ունակությունների և հմտությունների լիարժեք յուրացումը, նրանց մտավոր ուժերի և ստեղծագործական ունակությունների զարգացումը: Ճանաչողական գործունեությունը զգայական ընկալման, տեսական մտածողության և պրակտիկ գործունեության ամբողջությունն է: Այն իրականացվում է աշակերտների կյանքի ցանկացած քայլին, գործունեության և սոցիալական փոխհարաբերությունների բոլոր ձևերում (արտադրողական և հասարակական հանրօգուտ աշխատանք, աշխատանքային կողմնորոշիչ և գեղարվեստական գործունեություն, շփում), ինչպես նաև ուսումնական գործընթացում առարկայական պրակտիկ

գործողությունների իրականացման ճանապարհով (փորձարկում, կառուցում, հետազոտական խնդիրների լուծում և այլն): Սակայն միայն ուսուցման պրոցեսում է ճանաչողությունը ստանում հատուկ ձևակերպում, առանձնահատուկ միայն մարդուն բնորոշ ուսումնաճանաչողական գործունեության կամ ուսման մեջ: Ուսուցումը միշտ իրականանում է շփման մեջ և հիմվում է բառային գործնական մոտեցման վրա: Բառը միաժամանակ հանդիսանում է ուսումնասիրվող երևույթի արտահայտման և էության ճանաչման միջոց, աշակերտների հաղորդակցման և պրակտիկ ճանաչողական գործունեության կազմակերպման զենք: Այն սերտորեն կապված է նաև արժեքային կողմնորոշիչ գործունեության հետ, որն իր նպատակն է համարում անձնային իմաստների ձևավորումն ու շրջապատող իրականության երևույթների, առարկաների և պրոցեսների սոցիալական կարևորագույն գիտակցումը: Ուսուցումը, ինչպես որ ցանկացած այլ գործընթաց, կապված է շարժման հետ: Այն ինչպես և ամբողջական մանկավարժական գործընթացը, ունի խնդրային կառուցվածք, և, հետևաբար, ուսուցման գործընթացում շարժումը գնում է մի խնդրի լուծումից դեպի մյուս խնդրի լուծում, տանելով աշակերտին ճանաչողության ճանապարհով՝ անիմացությունից դեպի իմացություն, ոչ լրիվ գիտելիքից դեպի ամբողջական և հատուկ գիտելիք: Ուսուցումը չի հավասարեցվում գիտելիքների, ունակությունների և հմտությունների մեխանիկական փոխանցմանը: Սա երկկողմանի գործընթաց է, որում սերտ համագործակցության մեջ են գտնվում մանկավարժներն ու դաստիարակվողները (սովորողները)՝ դասավանդումն ու ուսումը: Ընդ որում դասավանդումը պետք է դիտարկվի պայմանականորեն, քանի որ ուսուցիչը չի կարող սահմանափակվել միայն գիտելիքների փոխանցմամբ, նա զարգացնում է և դաստիարակում, այսինքն իրականացնում է ամբողջական մանկավարժական գործունեությունը: Ուսուցչի գործունեությունը, որպես աշակերտների ամբողջ ուսումնական աշխատանքի ղեկավարի և կազմակերպչի, միշտ բարձր է գնահատվել առաջատար մտածողների կողմից: Ա. Դիստերվեգը գրում էր, որ «ուսուցիչը տիեզերքի համար արևն է»: Այն բարձր է գնահատվում նաև այսօր: Սակայն անհարաժեշտ է հստակ պատկերացնել հենց ուսուցչի դերը, քանի որ

նա է մանկավարժական գործընթացում հիմնական և սկզբնական հարաբերությունների կենտրոնական օղակը: Ուսուցման հաջողությունը վերջին հաշվով որոշվում է ուսման հանդեպ դպրոցականների վերաբերմունքով, ճանաչելու նրանց ձգտմամբ, գիտակցաբար և ինքնուրույն գիտելիքներ, ունակություններ և հմտություններ ձեռք բերելու նրանց կարողությամբ, ակտիվությամբ: Աշակերտը ոչ միայն ուսուցանող ազդեցությունների օբյեկտ է, այլ նաև հատուկ կազմակերպվող ճանաչման, մանկավարժական գործընթացի սուբյեկտը: Քանի որ աշակերտի զարգացումը կատարվում է միայն նրա սեփական գործունեության պրոցեսում, ապա ուսուցման հիմք անհրաժեշտ է համարել ոչ թե դասավանդումը, այլ ուսումը: [2]

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ըստ Յու. Բարանսկու. Ուսուցման կազմակերպման ձևը ուսուցչի և աշակերտների համաձայնեցված գործունեության արտաքին արտահայտությունն է, որն իրագործվում է սահմանված կարգով և որոշակի ռեժիմով (Յու. Բաբանսկի): Ուսուցման կազմակերպման ձևերն են դասը, լաբորատոր աշխատանքը, սեմինարները, պրակտիկումները, ֆակուլտատիվները, գործնական աշխատանքը, և այլն:

Պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում ուսուցման ձևերը տարբեր են եղել՝ կախված հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական, արտադրական հարաբերություններից, գիտության զարգացման միտումներից, դպրոցին ներկայացվող պահանջներից: [1]

Ուսումնական գործընթացի կազմակերպման դաս-դասարանային ձևն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- կազմակերպված, կայուն կառուցվածքը, ուսումնական խնդիրների միասնաբար լուծումը կոլեկտիվի ջանքերով,
- միևնույն տարիքի և պատրաստվածության մակարդակի սովորողների մշտական կազմը (դասարան),

- յուրաքանչյուր դասարան աշխատում է ըստ պատրաստի պլանի (ուսուցման պլանավորում),
- ուսումնական գործընթացն իրականանում է միմյանց փոխկապված, մեկը մյուսին հաջորդող առանձին մասերի՝ դասերի ձևով,
- յուրաքանչյուր դաս նվիրվում է միայն մեկ առարկայի,
- դասերը մշտապես հաջորդում են միմյանց,
- ուսուցիչն ունի ղեկավար դեր (մանկավաժական կառավարում),
- կիրառվում են սովորողների ճանաչողական գործունեության տարբեր տեսակներ ու ձևեր:

Ուսումնական աշխատանքի կազմակերպման դաս-դասարանային ձևը, այլ ձևերի, մասնավորապես անհատականի համեմատ ունի մի շարք առավելություններ՝

- դպրոցական տարիքի երեխաների՝ ուսումնական պարապմունքներին զանգվածային ներգրավման դեպքում տվյալ համակարգն ապահովում է սովորողների աշխատանքի կազմակերպական հստակություն ու անընդհատություն և խթանում է դասարանի կոլեկտիվի ազդեցությունը յուրաքանչյուր աշակերտի ուսումնական գործունեության վրա,
- դասն ունի հստակ կառուցվածք,
- ապահովում է գիտելիքների յուրացման համակարգվածությունն ու հաջորդականությունը,
- ենթադրում է դպրոցականների ուսումնական և արտաուսումնական աշխատանքի սերտ կապ,
- ապահովում է ուսումնական աշխատանքի կոլեկտիվ, խմբային և անհատական ձևերի համադրման հնարավորություն,
- բարենպաստ նախադրյալներ է ստեղծում սովորողների փոխուսուցման, կոլեկտիվ գործունեության, մրցակցության, դաստիարակության և զարգացման համար,
- առկա է սովորողի վրա ուսուցչի հուզական ներգործությունը,
- տնտեսող է, քանի որ մեկ ուսուցիչը միաժամանակ աշխատում է սովորողների մեծ խմբի հետ:

Միաժամանակ այս ձևն ունի թերություններ, որոնք նվազեցնում են նրա արդյունավետությունը, օրինակ՝ կողմնորոշումը դեպի միջին աշակերտը, սովորողների հետ ուսումնադաստիարակչական անհատական աշխատանքի հնարավորության բացակայությունը, սահմանափակում է աշակերտների հաղորդակցումը միմյանց հետ, դժվարացնում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապի ապահովումը, խոչընդոտում է ընդունակ աշակերտի առաջխաղացումը, ուսուցիչն ինչպես հարկն է չի կարողանում ճանաչել յուրաքանչյուրի անհատական, հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Այսպիսով՝ դասը սովորողների միևնույն տարիքի մշտական կազմի, գրեթե միևնույն մակարդակի երեխաների հետ կայուն դասատախտակով ուսուցման կազմակերպման հիմնական ձևն է, որն ընդգրկում է ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրատարրերը՝ նպատակը, բովանդակությունը, միջոցները, մեթոդները, կառավարման գործունեությունը և դիդակտիկական բոլոր տարրերը: [3]

Գլուխ 2

Խմբային ուսուցում

Խմբային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Խմբային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Խմբային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

- Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
- Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
- Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:
- Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը: [8]

Խմբային ուսուցմամբ դասի իմ օրինակը ներկայացված է հավելված 1-ում:

Խմբային ուսուցման խմբերի տեսակները

Խմբային ուսուցման ֆորմալ խմբեր

Խմբային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է ՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Խմբային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Խմբային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար:

Խմբային ուսուցման հենակետային խմբեր

Խմբային ուսուցման հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում:

Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Խմբային ուսուցման մեթոդներ

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Խմբային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը խմբային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,

- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք: [7]

Խմբային ուսուցման առավելությունները

Խմբային ուսուցման պարագայում սովորողն ավելի մոտ է կանգնում ուսուցման բուն գործընթացին և դառնում դրա ակտիվ մասնակից, քանի որ նա իր խմբի հետ առաձին քննարկում, բանավիճում, առաջարկում, մեկնաբանում է ուսումնասիրվող նյութը: Համագործակցային խմբերով աշխատանքը գործուն և արդյունավետ ուսումնառության հնարավորություն է ընձեռնում: Պատկերացնենք մի դասարան, ուր աշակերտները զարգացնում են իրենց ուսումնական հմտությունները և ընդլայնում ըմբռնումները՝ զանազան իրական հանգամանքներում մասնակից դառնալով իրենց հետաքրքրություններն ու երևակայությունը խթանող կոնկրետ գործնական աշխատանքների: Նրանք անհատապես և խմբերով կարծիքներ են քննարկում,

կազմում հանձնարարականների ցանկեր, հետազոտություններից ստացված տվյալների հավաքում: Այստեղ ստեղծագործական գործունեությունը խմբային աշխատանք է և ստեղծագործական մտածողությունը խթանող համագործակցություն: Ստեղծագործող մարդկանց հետ աշակետների համագործակցությունը նպաստում է, որ նրանք հաղորդակցվեն այն հնարներին, ռազմավարություններին ու մոտեցումներին, որոնք մարդիկ կիրառում են ստեղծագործելու ընթացքում: Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է: Ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այս հիմնահարցերին, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումը աշակերտներին հնարավորություն է տալիս առավել հեշտությամբ հարմարվել կյանքի պահանջներին:

Խմբային ուսումնառությունը կարող է նպաստել երեխաների կարողությունների ըստ ամենայնի բացահայտմանը: Համագործակցային ուսումնառության բոլոր մեթոդների համար էլ ընդհանուր է հետևյալ գաղափարը աշակերտները համագործակցում են՝ միասին սովորելու նպատակով և պատասխանատու են ինչպես իրենց, այնպես էլ թիմակիցների ուսումնառության համար: Խմբային ուսումնառության բոլոր մեթոդներում առանցքային նշանակություն ունեն երեք հասկացություններ՝

- թիմային պարգևներ (թիմային առաջադիմության գնահատում),
- անհատապես հաշվետու լինելու անհրաժեշտություն,
- հաջողության հասնելու հավասար հնարավորություններ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ինտեգրված գործնական աշխատանքները, երբ հնարավորություն է առաջանում իրականացնել նախկինից այլ առարկաներից սովորողների գիտելիքների տեղափոխում նոր իրադրություն: Ինտեգրված գործնական աշխտանքները հնարավորություն են տալիս սովորողին տեսնելու և պատկերացում կազմելու շրջակա միջավայրի և աշխարհի ամբողջականության մասին, դրդում են նրան հետազոտական, որոնողական

գործունեության, ստիպում են ձևավորելու հարցեր և փնտրելու պատասխաններ, արթնացնում են հետքրքրություն առարկայի նկատմամբ:

Գլուխ 3

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հեռավար ուսուցման ներդրումը պայմանավորված է որակյալ, զանգվածային և անհատականացված կրթություն ապահովելու անհրաժեշտությամբ: Գոյություն ունեցող ուսուցման ձևերը տնտեսական և կազմակերպչական տեսանկյունից թույլ չեն տալիս գործնականում նման կրթություն ապահովել, սակայն հեռավար ուսուցումը, որը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման վրա, լուծում է այդ խնդիրը: Հեռավար ուսուցումը կրթություն ստանալու որակապես նոր ձև է, որն առաջացել է XX դարի վերջում՝ շնորհիվ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների: Գիտական տեսանկյունից կրթություն ստանալու

այս ձևն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում, քան հեռակա կրթությունը: Այն չի համարվում հեռակա ուսուցման կատարելագործված ձև: Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Հեռավար ուսուցման նպատակը բարձրագույն մասնագիտական կրթական հաստատությունների սովորողներին հիմնական և լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու հնարավորություն ընձեռելն է անմիջապես բնակության կամ ժամանակավոր գտնվելու վայրում: Ռադիոյի և հեռուստատեսության հայտնվելը փոփոխություն մտցրեց հեռավար ուսուցման մեթոդներում: Դա բեկումնային պահ էր, երբ ուսուցման լսարանը հարյուրապատիկ մեծացավ: Վերջին տարիներին տարբեր երկրների բուհերում, իրոք, հեռավար ուսուցման կազմակերպման գործում մեծ տարածում է ստացել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Այն արդյունավետ հետադարձ կապ է ապահովում, ինչը նպաստում է ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպմանը, այնպես էլ տվյալ դասընթացը վարող դասախոսի հետ հաղորդակցվելուն: Հեռավար ուսուցումը դարձել է հեռակա ուսուցման այլընտրանք: Այն ուսուցման նոր ձև է և ոչ թե ձևափոխված հեռակա ուսուցում: Որպես կանոն՝ հեռավար բարձրագույն ուսուցում ստացող անձինք հիմնական առարկաներից քննություն են հանձնում ուսումնական կենտրոններում: Տեսականորեն հնարավոր է, որ սովորողը ուսուցման ողջ գործընթացում ոչ մի անգամ չայցելի ուսումնական հաստատություն: Սակայն գործնականում դա հնարավոր չէ, քանի որ մտավախություն կա, որ ուսուցումը որևէ անձի փոխարեն կարող է անցնել մեկ ուրիշը: Այսուհանդերձ, այդպիսի կրթական ծրագրերի մշակումն արդիական է: Դասախոսները գիտակցում են ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը ուսումնական գործընթացում: Համացանցի միջոցով հեռավար ուսուցման դեպքում սովորողը՝ 1) ինքն է ընտրում իր համար ամենահարմար ուսուցման ժամանակը, 2) կարող է սովորել «իր սեփական արագությամբ» և իրեն հարմար ռեժիմով, 3) կարող է կենտրոնանալ ուսումնական նյութի որոշակի մասերի վրա, 4) կարող է ամեն օր ստուգել իր գիտելիքները, 5) կարող

է ավելի շատ համագործակցել դասախոսի հետ, 6) կարող է ավելի արագ ստանալ անհրաժեշտ տեղեկությունները: Համացանցային ուսուցման համատեքստում «կենդանի» դասերի նպատակն է. 1) օգնել սովորողներին՝ ավելի լավ յուրացնելու դասընթացը, 2) ապահովել դրական հետադարձ կապ և խթանել ուսուցումը, 3) ուսուցումը կազմակերպելիս հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի հույզերը, 4) օգտագործել ուսուցման հոգևոր բաղադրիչներ, 5) օգնել սովորողներին ճիշտ հարցադրումներ կատարելու, 6) որոշել սովորողի ուսուցման պահանջարկը: Հեռավար ուսուցման պահանջարկ ունեն բնակչության բազմաթիվ սոցիալական խմբեր. 1) սեփականության տարբեր ձևեր ունեցող ձեռնարկություններում աշխատող տարբեր մակարդակի ղեկավարներ և մենեջերներ, 2) հեռավոր համայնքներում ապրող և մեծ քաղաքներում առկա ուսուցման համար միջոցներ չունեցող երիտասարդներ, 3) ժամկետային զինծառայողներ, 4) աշխատանքից ազատված կամ կրճատված և որպես գործազուրկ գրանցված անձինք, 5) երկրորդ կրթություն ստանալու ցանկություն ունեցող ուսանողներ, 6) մոտակա կրթական հաստատությունների կողմից առաջարկվող կրթությունից ավելի մրցունակ կրթություն ստանալ ցանկացող անձինք, 10 7) տարիներ առաջ բուհն ավարտած և աշխատող անձինք, որոնք ցանկանում են նոր գիտելիք ստանալ, 8) հեռավոր շրջանների բնակիչներ, 9) մարդիկ, որոնց աշխատանքի յուրահատկությունը թույլ չի տալիս սովորել ներկայիս կրթական տեխնոլոգիաների ռիթմով, 10) բանտարկյալներ, 11) տարբեր կրթական հաստատությունների ուսուցիչներ, 12) ֆիզիկական սահմանափակ կարողություններով անձինք: [5]

ՀԵՌԱՎԱՐ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ:

Հեռավար ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հեռավար դասընթացների նախագծման և իրագործման հիմքն են: Հեռավար ուսուցումը

դիտվում է որպես ուսուցման ինքնուրույն ձև. այն չի կարող իրականացվել ուսուցման ավանդական ձևերով: Հեռավար ուսուցման և ավանդական ուսուցման տարբերություններից կարելի է առանձնացնել մի շարք տիպիկ հոգեբանական մանկավարժական խնդիրներ, որոնք ստիպված են լուծել դասախոսներն ու ուսանողները: Դրանք են. 1) դժվարություններ՝ կապված ուսուցման գործընթացի մասնակիցների միջանձնային շփման հետ, 2) խնդիրներ՝ կապված արդյունավետ աշխատող փոքր ուսումնական խմբերի ձևավորման հետ՝ համագործակցված ուսուցում իրականացնելու համար, 3) խնդիրներ՝ կապված ունկնդիրների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության հետ՝ առավել արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու նպատակով, 4) դասախոսի համապատասխանությունը հեռավար ուսուցման համար ընտրված մեթոդիկային և մանկավարժական տեխնոլոգիաներին: Հեռավար ուսուցումը համարելով ուսուցման նոր ձև, ինչպես ամրագրված է կրթության տարբեր աստիճաններին վերաբերող ՀՀ օրենքներում, միաժամանակ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել գործող պետական կրթական չափորոշիչներում կամ մշակել նորը: Այսպիսով՝ հեռավար ուսուցումը կարող է համարվել XXI դարի ինքնուրույն ուսուցման ձև, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման նորարարական բաղադրիչ:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Հեռավար ուսուցումը կրթություն ստանալու և որակավորումը բարձրացնելու լայն հնարավորություններ է ստեղծում հաշմանդամների, երեխաների դաստիարակությամբ զբաղված կանանց, իրենց հիմնական աշխատանքն ընդհատելու հնարավորություն չունեցող անձանց, կրթական հաստատություններից հեռու շրջաններում բնակվողների համար: Հեռավար ուսուցման առավելություններն են. 1) Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում – ժամանակակից ծրագրային և տեխնիկական միջոցների կիրառմամբ իրականացվող ուսուցումը էլեկտրոնային կրթությունը դարձնում է առավել արդյունավետ: 2)

Ուսուցման մատչելիություն - հնարավորություն է տալիս սովորելու բնակավայրից հեռու, ողջ կյանքի ընթացքում՝ համատեղելով ուսումը հիմնական գործունեության հետ: 3) Ճկունություն և ազատություն, մուտք դեպի որակյալ կրթություն - հնարավորություն է տալիս հեշտությամբ ընտրելու մի քանի լավագույն դասընթաց տարբեր երկրների համալսարաններից: 4) Անհատական բնույթ - հեռավար ուսուցումն ունի ավելի անհատական բնույթ, քանի որ ունկնդիրն ինքն է որոշում ուսուցման ընթացքը: Նա կարող է մի քանի անգամ վերադառնալ առանձին թեմաների կամ բաց թողնել առանձին բաժիններ: Հեռավար ուսուցման թերություններն են. 1) Բացակայում է սովորողի և դասախոսի միջև անմիջական հաղորդակցումը: 2) Դժվար է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ սովորողների խմբում: Իսկ երբ սովորողի կողքին չկա մեկը, որը կարող է ոգևորել նրան, դա կարող է խիստ բացասաբար ազդել ուսուցման գործընթացի վրա: 3) Հեռավար սովորելու ցանկություն ունեցողներից ոչ բոլորն ունեն անհատական համակարգիչ և համացանց, դժվար է ապահովել անընդհատ մուտք դեպի տեղեկատվական աղբյուրներ, ինչպես նաև տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար: 4) Բարձր պահանջներ է ներկայացվում ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կառավարմանը, բավական բարդ է ունկնդիրներին շահադրդելու խնդիրը: 5) Հեռավար ուսուցման հիմնախնդիրներից մեկը գիտելիքների ստուգման ժամանակ սովորողի ինքնությունը պարզելն է: 6) Անհրաժեշտ են մի շարք անհատական և հոգեբանական պայմաններ, նաև խիստ ինքնակարգապահություն, իսկ դա ուղղակիորեն կախված է սովորողի ինքնուրույնությունից և ինքնագիտակցությունից: 7) Սկզբնական շրջանում բավական մեծ են հեռավար ուսուցման համակարգի ստեղծման և տեխնիկական ապահովման ծախսերը: 8) Բավական տարողունակ է հեռավար ուսուցման համապատասխան դասընթացների մշակման գործընթացը: Այստեղ մեծ դեր ունի համաշխարհային որոնողական ցանցը՝ Google-ը: 9) Տեխնիկական սահմանափակ հնարավորությունների և մոդեմների դանդաղ աշխատանքի պատճառով ձայնը, պատկերը և գրաֆիկան հաճախ ուշացումով են տեղ հասնում, թեպետ համապատասխան տեխնոլոգիաներն անընդհատ բարելավվում են: 10) Մի շարք գործնական հմտություններ կարելի է ձեռք բերել միայն իրականում (բայց ոչ

վիրտուալ) գործնական և լաբորատոր աշխատանքներ կատարելով: 11) Բացասական գործոն է նաև սոցիալական մեկուսացումը. հաղորդակցման տեխնոլոգիաները հանգեցնում են սովորողների մեկուսացման, նվազում է հսկողությունը դասախոսի կողմից: Չնայած նշված թերություններին՝ աշխարհի բազմաթիվ երկրներում հեռավար ուսուցումն իրական այլընտրանք է ավանդականին: Դրա հանրաճանաչությանը նպաստում է ավանդականի համեմատ ուսուցման ավելի ցածր արժեքը և, անկախ հեռավորությունից, ուսումնական հաստատություն ընտրելու հնարավորությունը:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ : Հեռավար տեխնոլոգիաների տեսակներն են. 1) Քեյսային (պորտֆելային) տեխնոլոգիա. սովորողներին ուղարկվում են թղթային և խտասկավառակային կրիչներով ուսումնամեթոդական նյութերի հավաքածուներ՝ ինքնուրույն ուսուցման համար: 2) Հեռուստատեսային տեխնոլոգիա. հիմնված է ուսուցման գործընթացում հեռուստատեսային միջոցների կիրառման վրա: 3) Համացանցային տեխնոլոգիա. հիմնված է համացանցի կիրառման վրա՝ սովորողներին ուսումնամեթոդական նյութերով ապահովելու և ուսուցանելու համար: 4) Լոկալ–ցանցային տեխնոլոգիա. հիմնված է լոկալ ցանցերի կիրառման վրա՝ սովորողներին ուսումնամեթոդական նյութերով ապահովելու և ուսուցանելու համար: 5) Տեղեկատվական-արբանյակային ցանցային տեխնոլոգիա. արբանյակային կապի միջոցով իրականացվում է հեռուստատեսային ուսուցում, ինչպես նաև տեղեկատվությունը լոկալ ցանցերում լրացվում և թարմացվում է: 6) Ուսումնահերթափոխային տեխնոլոգիա. պարապմունքներ անցկացնելու համար դասախոսներն այցելում են ուսումնական կենտրոններ: 7) Ատեստավորման հերթափոխային տեխնոլոգիա. ատեստավորող հանձնաժողովը սովորողների գնահատումն անցկացնում է ուսումնական կենտրոններում: Հեռավար ուսուցման դեպքում սովորողի և դասախոսի կապն իրականացվում է հեռահաղորդակցության միջոցով: Որպեսզի հեռավար ուսուցման մեթոդներն արդյունավետ լինեն յուրաքանչյուր սովորողի համար, պետք է համապատասխանեն հետևյալ բնութագրերին. 1) Առավել մեծ ուշադրություն դարձնել սովորողին, նրա անհատական

տվյալներին, առողջական վիճակին, ավելի ճշգրիտ և մանրակրկիտ պլանավորել և կազմակերպել սովորողի գործունեությունը, սահմանել ուսուցման նպատակներն ու խնդիրները, տրամադրել անհրաժեշտ ուսումնական նյութեր: 2) Ապահովել առավելագույն ինտերակտիվություն սովորողների և դասախոսների միջև, հնարավորություն ընձեռել խմբակային ուսուցման համար: 3) Իրականացնել հետադարձ կապ: 4) Ստեղծել մոտիվացիա և պահպանել այն: 5) Ապահովել ծրագրերի բովանդակային մոդուլների ընտրություն. սովորողը հնարավորություն կունենա իր հայեցողությամբ կամ դասախոսի առաջարկությամբ ընտրելու ցանկացած մոդուլ՝ իր պատրաստվածության մակարդակին համապատասխան: Հեռավար ուսուցման մեթոդների օգտագործման ժամանակ փոխվում են նաև վերահսկողության մեթոդները: Գիտելիքների համակարգչային ստուգումը, համեմատած ստուգման ավանդական մեթոդների հետ, ունի զգալի առավելություններ: Դրանք են. 1) Անհատական մոտեցում է ցուցաբերվում սովորողների գիտելիքների ստուգման գործում (հաշվի է առնվում աշխատանքի կատարման արագությունը, տարբերակվում է աշխատանքի բարդության աստիճանը), բարձրանում է գնահատման անաչառության աստիճանը: 2) Սովորողը պարզ տեսնում է իր բոլոր թերացումները (գնահատական կարող է տրվել ոչ միայն աշխատանքն ավարտելուց հետո, այլև յուրաքանչյուր հարցի համար): 3) Գնահատման գործընթացի համար ծախսվում է նվազագույն ժամանակ: 4) Համակարգիչը ցույց է տալիս աշխատանքների կատարման արդյունքը՝ հաշվի առնելով թույլ տրված սխալները և ծախսված ժամանակը, համեմատում է տարբեր սովորողների կողմից նույն առաջադրանքի կատարման ցուցանիշները: 5) Սովորողը կարող է ընտրել իրեն անհրաժեշտ օգնության ձևը: [4]

Եզրակացություն

Ավարտելով կուրսային աշխատանքը հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

- Ժամանակակից աշխարհում, որտեղ ամեն պահ ի հայտ են գալիս նորանոր գիտելիքներ, գաղափարներ և տեխնոլոգիաներ, դպրոցը պետք է կարողանա քայլել այդ ամենին զուգընթաց:
- Պետք է օգտագործվեն առավել շատ ժամանակակից ուսուցման ձևեր՝ հնարավորինս տարբերվող ավանդական ուսուցման ձևերից:
- Պետք է կարևորվի խմբային ուսուցումը, քանի որ այն ունի շատ առավելություններ, որոնցից առաջնայինը երեխաների մոտ կարգապահություն և համագործակցային հմտությունների ձևավորումը և նրանց ակտիվ ներառումն է դասապրոցեսի մեջ:
- Մեծ տեղ պետք է հատկացվի հեռավար ուսուցմանը, որի միջոցով հնարավոր կլինի կազմակերպել ուսուցումը տարբեր համացանցային ծրագրերով՝ ցանկացած վայրից:

Գրականություն

Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, 2005 [1]

Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Եր., 2004 [2]

Հակոբյան Գ., Ժամանակակից դասի արդյունավետությանը ներկայացվող մանկավարժահոգեբանական և դիդակտիկական պահանջները, 2013 [3]

Հեռավար ուսուցման կազմակերպումը եվ իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու Երևան 2017 [4]

Պետրոսյան Հայկ, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ Մոդուլային ուսումնական ձեռնարկ, Եր., 2012 [5]

Балаев А.А. Активные методы обучения. М., 2006. [6]

Выготский Л.С. Педагогическая психология. [7]

Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon [8]

Օրվա դասի պլանավորում

- Դպրոց՝ Կապանի թիվ 13 հիմնական դպրոց
- Դասարան՝ 3-րդ
- Դասվար՝ Աստղիկ Դանիելյան
- Դասի տևողությունը՝ 45 րոպե
- Դասի տիպը՝ համակցված
- Դասի թեման՝ Հովհաննես Թումանյան <<Ամենից լավ տունը>>
- Օ, Ռ-ի ուղղագրություն:

- ***Դասի նպատակները***
- ***<u>ա) ակադեմիական</u>***
- Կընթերցեն բնագիրը՝ կառավարելով ընթերցանության տեմպը՝ այն համապատասխանեցնելով բնագրի բովանդակությանը:
- Կգուշակեն բնագրի շարունակությունը՝ զարգացնելով ստեղծագործական կարողությունները:
- Կկրկնեն օ,ռ-ի մասին ունեցած գիտելիքները:

- ***<u>բ) սոցիալական</u>***
- Կկարողանան որոշել հերոսների զգայական վիճակը (ուրախ է, տխուր է...):
- Կկատարեն դատողություններ հերոսների բնավորության և արարքների վերաբերյալ:

- ***Դասի խնդիրները***
- զարգացնել արագ կողմնորոշվելու, արագ արձագանքելու կարողությունը:
- Ամրապնդել գիտելիքները օ,ռ-ի ուղղագրության և ուղղախոսության շուրջ:

  Կահավորում՝ -գրքեր, տետրեր, գրիչներ:
- ***Մեթոդներ*** – Մտագրոհ, ֆրոնտալ հարցում, զրույցի մեթոդ, ապագայի անիվ, հինգ րոպեանոց ազատ շարադրանք:

Խթանում՝

Ֆրոնտալ հարցում

1.Սահմանել ի՞նչ է հայրենի տունը:

4.Մտագրոհի մեթոդով գրատախտակին գրել հայրենի տուն հասկացությունը և լրացնել:



Իմաստի ընկալում՝

Բնագրի բարձրաձայն ընթերցում աշակերտների կողմից՝ իրար շարունակելով:

Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ հարցերին՝

1.Որտե՞ղ էր ապրում անհանգիստ տղան:

2. Ինչպե՞ս է հեղինակը բնութագրում տունը:

3.Տղան ինչու՞ հեռացավ տնից:

4.Ի՞նչ վերաբերմունք ուներ տղան մոր նկատմամբ, որ տողերում է երևում դա: Ինչպե՞ս էր պատկերացնում հայրենի տունը:

Հարցերի պատասխանները գտնել բանաստեղծության մեջ և ընթերցել:

Դուրս են գրվում նորածանոթ բառերը, օրինակ՝ գորշ, խրճիթ, եզերք:

Բացատրական բառարանի օգնությամբ գտնում են գորշ, խրճիթ, եզերք բառերի հոմանիշները, կազմում նախադասություններ:

Մեկնաբանվում է յուրաքանչյուր քառատող, կատարվում եզրակացություն:

<<Ապագայի անիվ>>

Պատճառ



Կշռադատում՝

Պրոբլեմային հարցի առաջադրում.

1.Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ վարվեց տղան:

2.Ինչու՞ մայրը հետ չպահեց նրան:

3.Ի՞նչպես կվարվեիք հերոսի փոխարեն:

<<Ապագայի անիվ>>

Հետևանք



Խմբային աշխատանք

- Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի մեթոդով կատարել խմբային աշխատանք՝ <<Ի՞նչ է իմ պատկերացմամբ հայրենի տունը>> :
- Դասարանը բաժանվում է 6 խմբի, յուրաքանչյուրում՝ 4-5 աշակերտ:
- Աշխատանքները բարձրաձայն ընթերցվում են, գնահատվում են խմբի անդամները:
- Կատարվում է անդրադարձ, հանձնարարվում տնային աշխատանք՝ պատկերել տոհմածառ (հիշել <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայից տոհմածառը)՝ ընտանիքի անդամների նկարներով: